ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի 2013 թ. հարցման հայաստանյան արդյունքները

Թրանսփարենսի Ինթերնեշնլի (ԹԻ) պատվերով 2012 թ. սեպտեմբերից մինչև 2013 թ. մարտն ընկած ժամանակահատվածում աշխարհի 107 երկրներում հիմնականում WIN/GIA-ի[1] կողմից անցկացվել է Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՀԲ) 2013-ի հարցումը (ԿՀԲ-ի մասին ավելի մանրամասն տես "Հաճախակի տրվող հարցեր" նյութում): Հայաստանում այն իրականացրել է Հայաստանում WIN/GIA-ի պաշտոնական ներկայացուցիչ MPG (Էմ-Փի_Ջի – Marketing Professional Group) ՍՊԸ-ն: Հարցման ընտրանքը կազմել է 1,068 անձ (18 տարեկանից բարձր տարիքի բնակիչ) և որպես հարցման մեթոդ ընտրվել էր դեմ առ դեմ հարցազրույցը: Հայաստանն ընդգրկվում է ԿՀԲ հարցման մեջ երրորդ անգամ անընդմեջ (նախորդ հարցումները, որոնցում Հայաստանն ընդգրկվել էր, անցկացվել էին 2009 և 2010 թվականներին):

Հայաստանին և նախկին ԽՍՀՄ հանրապետություններին վերաբերող տվյալներն ամփոփ ներկայացված են ԿՀԲ նյութերի փաթեթում ներառված աղյուսակներում[2]: Ավելի մանրամասն ԿՀԲ 2013-ի զեկույցի և այլ առնչվող նյութերի հետ մասին տես ԹԻ պաշտոնական կայքում (www.transparency.org):

ԿՀԲ 2013-ի Հայաստանի հիմնական արդյունքները

- Հարցվածների միայն 19 տոկոսն է գտնում, որ վերջին երկու տարիներին կոռուպցիան Հայաստանում նվազել է, իսկ ըստ 43 տոկոսի՝ այն աճել է:
- Հարցվածների 82 տոկոսը կոռուպցիան համարում է լուրջ կամ շատ լուրջ հիմնախնդիր: Այն այդպիսին չի համարում միայն 3 տոկոսը:
- Կոռուպցիայի մակարդակը կրճատելու ուղղությամբ իշխանությունների կողմից ձեռնարկված քայլերը շատ արդյունավետ կամ արդյունավետ է համարում հարցվածների միայն 21 տոկոսը, այն դեպքում երբ այդ քայլերն անարդյունավետ կամ շատ անարդյունավետ է համարում հարցվածների 53 տոկոսը: Համեմատելով այս թվերը ԿՀԲ նախորդ՝ 2010 թ. հարցման՝ նույն հարցին տրված պատասխանների հետ, կարելի է ասել, որ նվազել է այն հարցվածների թիվը, որոնք կոռուպցիայի դեմ պայքարում իշխանությունների ձեռնարկած քայլերը համարում էին արդյունավետ կամ շատ արդյունավետ (նվազում 27-ից մինչև 21 տոկոս):
- Հարցման մեջ ընդգրկված հաստատություններից (կառույցներից)/ոլորտներից[3] որպես ամենակոռումպացված են ընկալվում դատական համակարգը,

[1] WIN/GIA-ն (Համաշխարհային անկախ ցանց (WIN)/Գելափ Ինթերնեշնլ Ասոցիացիա(GIA)) մարկետինգային և հանրային կարծիքի ուսումնասիրություններ անցկացնող ընկերությունների համաշխարհային ցանց է, որը ներառում է այդ ոլորտի առաջատար 77 ընկերություն:

[2] Աղյուսակները ներառում են ԿՀԲ 2013-ի ողջ աշխարհի համար միջինացված, հարցման մեջ ընդգրկված նախկին խորհրդային հանրապետությունների (բացառությամբ Ղրղզստանի, որտեղ հարցումն անցկացվել է միայն 8 քաղաքներում, որի հետևանքով նրա արդյունքներն այնքան էլ համեմատելի չեն ԱՊՀ մյուս երկրների արդյունքների հետ, որտեղ հարցումն անցկացվել է այդ երկրների ողջ տարածքում) և Թուրքիայի տվյալները: Հայաստանի հարևան երկրներից հարցումը չի անցկացվել միայն Իրանում:

[3] Այդ հաստատությունները/ոլորտներն են կուսակցությունները, խորհրդարանը, բիզնես/մասնավոր հատվածը, լրատվամիջոցները, պետական պաշտոնյաները/հանրային ծառայողները, դատական համակարգը, զինված ուժերը, կրոնական կազմակերպությունները, հասարակական

պետական պաշտոնյաները /հանրային ծառայողները և առողջապահական հիմնարկությունները/ծառայությունները: Նշված հաստատությունների/ոլորտները կիսում են առաջինից երրորդ “պատվավոր” տեղերն իրենց համաթվերի 4.0-ին հավասար արժեքով 1-ից 5 սանդղակում (որտեղ 1-ը նշանակում է բացարձակապես չկոռումպացված, իսկ 5-ը՝ լիովին կոռումպացված)[4]: Նրանց մի փոքր զիջում է ոստիկանությունը, որի համաթիվը հավասար է 3.9-ի: Առավել քիչ կոռումպացված են ընկալվում հասարակական և կրոնական կազմակերպությունները՝ համապատասխանաբար 2.8 և 2.9 համաթվերով: Այստեղ առավել մտահոգիչն այն է, որ առավել կոռումպացված ընկալվող կառույցների շարքում են գտնվում այն կառույցները, որոնք հենց իրենք են կոչված պայքարելու կոռուպցիայի դեմ: 4.0 համաթիվ ստացած դատական համակարգն ընկալվում է որպես շատ կամ ծայրահեղ կոռումպացված հայաստանցի հարցվածների 69 տոկոսի կողմից, իսկ 3.9 համաթիվ ստացած ոստիկանության դեպքում այդ տոկոսը հավասար է 66-ի:

- Հարցվածների 48 տոկոսի կարծիքով երկիրը ղեկավարվում է իրենց շահերը հետապնդող մի քանի ազդեցիկ և հարուստ խմբերի կողմից, և միայն 16 տոկոսն է կարծում, որ այդ խմբերը ոչ մի ազդեցություն չունեն կամ ունեն սահմանափակ ազդեցություն երկրի կառավարման հարցերում:
- Հարցվածների միայն 9 տոկոսն է գտնում, որ Հայաստանում անձնական կապերը բացարձակապես կարևոր չեն հարցեր լուծելու համար, այն դեպքում, երբ 48 տոկոսի կարծիքով դրանք կարևոր կամ շատ կարևոր են:
- Սակայն Հայաստանի դեպքում պատկերն առավել մտահոգիչ է դառնում, երբ դիտարկվում են հարցման այն արդյունքները, որոնք վերաբերում են կոռուպցիայի դեմ պայքարի մեջ մարդկանց ներգրավված լինելու ցանկությանը և այդ պայքարում իրենց դերի ընկալմանը: Մասնավորապես, հարցվածների միայն 37 տոկոսն է կարծում, որ շարքային քաղաքացու ներգրավվումը կոռուպցիայի դեմ պայքարում կարող է ինչ-որ բան փոխել: Ավելի ցածր ցուցանիշ է գրանցվել միայն Ուկրաինայում (29 տոկոս), Սերբիայում (34 տոկոս) և Թունիսում (35 տոկոս): Որևէ ձևով կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավվել ցանկացել է հարցվողների միայն 43 տոկոսը: Այս ցուցանիշը հարցման մեջ ընդգրկված 107 երկրների մեջ ամենացածրն է, և նույնիսկ նախավերջին տեղում գտնվող Հունգարիային (54 տոկոս) այն զիջում է 11 տոկոսով: Սա վկայում է կամ հասարակության անտարբերության մասին, կամ նրանում տիրող վախի մթնոլորտի, կամ էլ, եթե նկատի ունենանք, որ հարցաթերթիկում համապատասխան հարցին առաջարկվող պատասխանների բոլոր տարբերակները ենթադրում են պայքարի խաղաղ ձևեր[5], նրա կողմից Հայաստանում կոռուպցիայի դեմ

կազմակերպությունները, կրթական համակարգը և առողջապահական հիմնարկությունները/ծառայությունները: Վերջինս առաջին անգամ է ընդգրկվել ԿՀԲ հարցումներում:

[4] ԿՀԲ նախորդ՝ 2010 թ. հարցման ժամանակ որպես առավել կոռումպացված հաստատությունները/ոլորտներն էին նշվել կրթական համակարգը (4.2), որին հաջորդում էին ոստիկանությունը (4.1) և դատական համակարգը (4.1):

[5] Հարցաթերթիկում նշված ձևերն են. ա/ իշխանությունների կողմից կոռուպցիայի դեմ պայքարում ավելի վճռական լինելու կոչի տակ ստորագրում, բ/ մասնակցություն կոռուպցիայի դեմ խաղաղ ցույցին, գ/ որպես ակտիվ անդամ անդամակցում կոռուպցիայի դեմ պայքար մղող կազմակերպությանը, դ/ ավելի մեծ

պայքարի խաղաղ ձևերի անարդյունավետության մասին: Վերջապես, հայաստանցի հարցվողների միայն 33 տոկոսը կբարձրաձայնի կոռուպցիոն դեպքերի մասին, եթե դրանց առնչվի կամ վկա լինի[6]: Այս ցուցանիշով Հայաստանից ավելի վատ դիրքերում են գտնվում Ուկրաինան (26 տոկոս), Յեմենը (27 տոկոս), Լիբիան (29 տոկոս) և Հունգարիան (30 տոկոս): Ընդ որում, այդ հարցին բացասական պատասխան տված 67 տոկոս հարցվողների բացարձակ մեծամասնությունը, այն է՝ 68 տոկոսը (ամենաբարձր ցուցանիշն այն երկրների շարքում, որտեղ հարցվածների մեծամասնությունը չի բարձրաձայնի կոռուպցիոն դեպքերի մասին), չի հայտնի կոռուպցիոն դեպքերի մասին, քանի որ գտնում է, դրանից ոչինչ չի փոխվի: Այս պատճառաբանությունն առավել տարածվածն է հարցման մեջ ընդգրկված 107 երկրներից 73-ում:

Հայաստանի վերաբերյալ այլ տվյալներից կարելի է հիշատակել, որ որևէ հաստատության/ոլորտի[7] հետ առնչված հարցվողների միայն 18 տոկոսն է նշել, որ ինքը այդ հաստատության/ոլորտի աշխատակցին կաշառք է տվել[8]: Ընդ որում, առավել հաճախ կաշառք են տվել առողջապահական հիմնարկություններին/ծառայությունների (24 տոկոս) և ոստիկանության (21 տոկոս) հետ առնչված հարցվածները: Առավել հազվադեպ են կաշառք տվել կոմունալ ծառայությունների հետ առնչված հարցվողները՝ ընդամենը 2 տոկոս: Կաշառք տվածների մեծամասնությունը՝ 51 տոկոսը, նշել է, որ իրենք կաշառքի տեսքով հայտնել են իրենց շնորհակալությունը մատուցված ծառայության համար: Եվս 27 տոկոսը նշել է, որ նրանք կաշառք են տվել, որովհետև միայն այդ ձևով է հնարավոր եղել ստանալ անհրաժեշտ ծառայությունը: Վերջապես, համաձայն հարցման տվյալների, հարցվածների միայն 28 տոկոսին է առաջարկվել կաշառք տալ, ընդ որում նրանցից 62 տոկոսը պնդում է, որ իրենք մերժել են այդ խնդրանքը/առաջարկը:

ծախսերի կատարում՝ գնելու համար ապրանքներ այնպիսի ընկերությունից, որը կոռումպացված չէ, և ե/ սոցիալական ցանցերով կոռուպցիայի հիմնախնդրի մասին ահազանգում:

[6] Եթե նկատի ունենանք այն, որ նշված 33 տոկոսի միայն 5 տոկոսը (այսինքն բոլոր հարցվածների միայն մոտ 1.7 տոկոսը) այդ դեպքում կդիմի քաղաքացիական հասարակության կառույցներին, ապա զարմանալի չէ, որ մեր կազմակերպության մասին տեղյակ է հարցվածների միայն 2 տոկոսը: Միևնույն ժամանակ, այդ 33 տոկոս բարձրաձայնողների բացարձակ մեծամասնությունը՝ 69 տոկոսը, կդիմեր համապատասխան պետական մարմիններին:

[7] Այդ հաստատությունները/ոլորտներն են կրթական համակարգը, դատական համակարգը, առողջապահական հիմնարկությունները/ծառայությունները, ոստիկանությունը, պետական ռեգիստրը/լիցենզիաներ, թույլտվություններ տվող կառույցները, կոմունալ ծառայությունները, հարկային մարմինները և կադաստրը:

[8] ԿՀԲ նախորդ 2010 թ. հարցման ժամանակ կաշառք տվել էր հարցվողների 22 տոկոսը: